



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**  
**Հ Ր Ա Մ Ա Ն**

20 մարտի 2020թ. թիվ 337

**Ժ. ՂԱԶԱՐՅԱՆԻՆ, Դ. ԹԱՄԱՐՅԱՆԻՆ ԵՎ  
 Դ. ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ ՄԵԾ ՊԱՐՆԻ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 10-րդ կետերով, հիմք ընդունելով ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետի պարտականությունները կատարողի զեկուցագիրը՝

Հ Ր Ա Մ Ա Ն

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի պետ Ժիրայր Ղազարյանին, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ Դավիթ Թամարյանին, հողաշինության և հողօգտագործման բաժնի ավագ մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Դավիթ Ստեփանյանին ա/թ մարտի 20-ին մեկ օրով գործուղել Մեծ Պարնի՝ Մեծ Պարնիի համայնքապատարանի աշխատակազմի թափուր պաշտոնների մրցույթներին որպես հանձնաժողովի անդամներ մասնակցելու համար:

2. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ  
 ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Invalid signature

ԱՐԹՈՒՐ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա.ՄԽԻԹԱՐՅԱՆ

2020թ. մարտի 20  
 ք. Վանաձոր